ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» 2013 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-70-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 20-րդ հոդվածի 6.3-րդ մասում «ռեզերվում» բառից հետո լրացնել «կամ հարկային ծառայության կադրերի ռեզերվում» բառերը:

Հոդված 2. Օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Հարկային ծառայության կադրերի ռեզերվում գտնվելու ժամանակահատվածում հարկային ծառայողի համար սահմանվում է աշխատավարձ՝ իր զբաղեցրած վերջին պաշտոնում ունեցած պաշտոնային դրույքաչափով, սակայն ոչ ավելի, քան հարկային ծառայության բարձրագույն խմբի առավելագույն դրույքաչափը:»:

Հոդված 3. Օրենքի 26-րդ հոդվածում «ռեզերվից» բառերից հետո լրացնել «կամ հարկային ծառայության կադրերի ռեզերվից» բառերը:

Հոդված 4. Օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասում «Կադրերի կարճաժամկետ ռեզերվում գտնվող քաղաքացիական ծառայողների» բառերը փոխարինել «Քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվում գտնվող քաղաքացիական ծառայողների և «Հարկային ծառայության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով նախատեսված հիմքով հարկային ծառայության կադրերի ռեզերվում գտնվող հարկային ծառայողների» բառերով և լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

««Հարկային ծառայության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով նախատեսված հիմքով հարկային ծառայության կադրերի ռեզերվում գտնվող հարկային ծառայողների վարձատրության ֆինանսավորումն իրականացվում է Արցախի Հանրապետության պետական բյուջեից հարկային մարմնի համար նախատեսված միջոցներից:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**